

3077

ՏՏԱԼԻՆ


ԶՐՈՒՅՑՑ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՐՈՂ  
ԵՄԻԼ ԼՈՒԴՎԻԳԻ ՀԵՏ



3K33

9 - 90

Պ Ե Տ Հ Ր Ա Տ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1938



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

14 NOV 2005

ՅԿՅՅ

Ձ-90 ար.

Ի. ԱՏԱԼԻՆ

15 JUN 2005

ԶՐՈՒՅՑ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՐՈՂ  
ԵՄԻԼ ԼՈՒԴՎԻԳԻ ՀԵՏ

1931 թ. դեկտեմբերի 31-ին

ՊԵՏՀԱՆՈՒՅՑ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1938

05 AUG 2013

307X

ԶՐՈՒՅՑ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՐՈՂ,

ԵՄԻԼ ԼՈՒԴՎԻԳԻ ՀԵՏ

1931 թ. գեկտեմբերի 18-ին

Լուդվիգի գլուխակի շնորհապարտ եմ  
Զեղ այն բանի համար, վոր Դուք հնարավոր համա-  
րեցիք ինձ ընդունել: Ավելի քան 20 տարի յէ, ինչ յես  
ուսումնասիրում եմ պատմական ականավոր անձնա-  
վորությունների կյանքն ու գործունեյությունը: Ինձ  
թվում ե, թե յես մարդկանց լավ եմ կարողանում  
ճանաչել, բայց դրա փոխարեն յես վոչինչ չեմ հաս-  
կանում սոցիալ-տնտեսական պայմաններից:

Ստացի ն: Դուք համեստություն եք անում:  
Լուդվիգի գլուխակի այդ իսկապես այդպես ե:  
Յել հենց այդ պատճառով յես հարցեր եմ տալու, վո-  
րոնք Զեղ գուցե տարորինակ թվան: Այստեղ, Կրեմ-  
լում, այսոր յես տեսա Պետրոս Մեծի միքանի նշխար-  
ները (ՔԸ), և առաջին հարցը, վոր յես ուզում  
եմ Զեղ տալ, հետեւյալն ե. արդյոք Դուք հնարավո՞ր  
եք համարում զուգահեռ Զեր և Պետրոս Մեծի միջև:  
Դուք Զեղ արդյոք համարո՞ւմ եք Պետրոս Մեծի գործի  
շարունակողը:

Ստացի ն: Վո՞չ մի կերպ: Պատմական զու-  
գահեռները միշտ վտանգավոր են: Տվյալ զուգահեռն  
անիմաստ ե:

Լուդվիգի գլուխակի պատմագրան համար, այն  
շատ բան արեց իր յերկրի գարգաղման համար, այն



6631-50

И. СТАЛИН

БЕСЕДА С НЕМЕЦКИМ  
ПИСАТЕЛЕМ ЭМИЛЕМ ЛЮДВИГОМ

Армгиз—Издательство полит.

литературы. Ереван, 1938

բանի համար, վոր Առևտության փոխադրի արեմայան  
կուլտուրան:

Ս տ ա լ ի ն: Այս', Պետրոս Մեծը, իհարկե,  
շատ բան արեց կալվածատերերի դասակարգը բարձ-  
րացնելու և ծնունդ առնող առետրական դասակարգը  
զարդացնելու համար: Պետրոսը խիստ շատ բան արեց  
կալվածատերերի ու առետրականների ազգային պե-  
տության ստեղծման ու ամրացման համար: Պետք է  
ասել նաև, վոր կալվածատերերի դասակարգը բարձ-  
րացնելը, առետրականների ծնվող դասակարգին ա-  
ջակցելը և այս դասակարգերի ազգային պետությունն  
ամրացնելը տեղի յեր ունենում ի հաշիվ ճորտ գյու-  
ղացիության, վորից յերեքտակ կաշի եյին մաշկում:  
Ինչ վերաբերում է ինձ, ապա յես լենինի աշակերտն  
եմ միայն, և իմ նպատակն ե՝ լինել նրա արժանավոր  
աշակերտը: Մի այլ դասակարգի, այն ե՝ բանվոր դա-  
սակարգի բարձրացումն ե իմ խնդիրը, մի խնդիր,  
վորին յես նվիրում եմ իմ կյանքը: Այդ խնդիրը վո՞չ  
թե ազգային վորեւե պետության ամրացումն ե, այլ  
սոցիալիստական, ուրեմն և ինտերնացիոնալ պետու-  
թյան ամրացումը, ըստվորում՝ այս պետության ա-  
մեն մի ամրացումը նպաստում ե ամբողջ միջազգային  
բանվոր դասակարգի ամրապնդմանը: Յեթե բանվոր  
դասակարգի բարձրացման և այդ դասակարգի սոցիա-  
լիստական պետության ամրապնդման համար իմ կա-  
տարած աշխատանքի մեջ ամեն մի քայլ ուղղված չլի-  
ներ գեպի այն, վոր ամրացնենք ու բարելավենք բան-  
վոր դասակարգի գրությունը, ապա յես իմ կյանքն  
աննպատակ կամացեցի:

Դուք տեսնում եք, վոր Զեր զուգահեռը հարմար  
չի դալիս:

Ինչ վերաբերում է լենինին ու Պետրոս Մեծին,  
ապա վերջինս մի կաթիլ եր ծովի մեջ, իսկ լենինը՝  
մի ամբողջ ովկիանոս:

Լ ու դ վ ի գ: Մարքսիզմը ժխտում է անձ-  
նավորության աչքի ընկնող գերը պատմության մեջ:  
Արդյոք Դուք հակասություն չե՞ք տեսնում պատմու-  
թյան մատերիալիստական ըմբռնման և այն բանի մի-  
ջև, վոր Դուք այնուամենայնիվ ընդունում եք պատ-  
մական անձնավորությունների աչքի ընկնող գերը:

Ս տ ա լ ի ն: Վո՞չ, այստեղ հակասություն  
չկա: Մարքսիզմը բնավ չի ժխտում աչքի ընկնող անձ-  
նավորությունների գերը կամ այն, վոր մարդիկ են  
պատմություն կերտում: Մարքսի մոտ, նրա՝ «Փիլի-  
սոփայության» մեջ և այլ յերկերում Պուք խոսքեր կդատնեք այն մասին, վոր հենց մարդիկ  
են պատմություն կերտում: Բայց, իհարկե, մարդիկ  
պատմություն են կերտում վոչ այնպես, ինչպես  
նրանց թելայրում ե վորեւե Փանտազիա, վոչ այնպես,  
ինչպես նրանց խելքին կիչէ: Յուրաքանչյուր նոր սե-  
րունդ հանդիպում է վորոշ պայմանների, վորոնք ար-  
դեն պատրաստի կան այն մոմենտին, յերբ հանդես  
է յեկել այդ սերունդը: Յեկ մեծ մարդիկ մի բան ար-  
ժեն միմիայն այն չափով, վորչափով վոր նրանք կա-  
րողանում են ճիշտ հասկանալ այդ պայմանները, հաս-  
կանալ, թե ի՞նչպես պետք է փոխել դրանք: Յեթե նրանք  
չեն հասկանում այդ պայմանները և ուղում են այդ  
պայմաններն այնպես փոխել, ինչպես նրանց թելա-  
յրում ե նրանց Փանտազիան, ապա նրանք, այդ մար-  
դիկ, ընկնում են Դուք-Քիշոտի գրության մեջ: Այս-  
պիսով, չենց ըստ Մարքսի, մարդկանց բնավ չպետք է  
հակարել պայմաններին: Հենց մարդիկ են պատմու-

թյուն կերտողները, բայց միայն վորչափով վոր նրանք ճիշտ են հասկանում պատրաստի վիճակում գտած պայմանները և վորչափով միայն նրանք հասկանում են, թե ինչպես պետք է փոխել այդ պայմանները: Գոնե այսպես ենք հասկանում Մարքսին մենք, ուստահան բոլշևիկներս: Իսկ մենք Մարքսին մի տասնյակ տարի չենք, վոր ուսումնասիրել ենք:

Լուդվիգ: Մի 30 տարի սրանից առաջ, յերբ յես սովորում եյի համալսարանում, պատմության մատերիալիստական ըմբռնմանն իրենց կողմնակից համարող գերմանական բազմաթիվ պրոֆեսորներ մեղներչում եյին, թե մարքսիզմը ժխտում է հերոսների գերը, հերոսական անձնավորությունների դերը պատմության մեջ:

Ստալին: Դրանք մարքսիզմը գոեհկացնողներ են յեղել: Մարքսիզմը յերբեք չի ժխտել հերոսների գերը: Ընդհակառակը, այդ գերը նա մեծ է համարում, սակայն, այն վերապահումներով, վորոնց մասին հենց այժմ խոսեցի:

Լուդվիգ: Այն սեղանի շուրջը, վորտեղ մենք նստած ենք, 16 աթոռ կա: Արտասահմանում մի կողմից՝ գիտեն, վոր ԽՍՀՄ մի յերկիր ե, վորտեղ ամեն ինչ կոլեգիալ կերպով պետք է վճռվի, իսկ մյուս կողմից՝ գիտեն, վոր ամեն ինչ միանձնաբար ե վճռում: Ո՞վ ե, վոր վճռում ե:

Ստալին: Վո՛չ, միանձնաբար չի կարելի վճռել: Միանձնյա վճիռները միշտ կամ գրեթե միշտ միակողմանի վճիռներ են: Ամեն մի կոլեգիալյում, ամեն մի կոլեկտիվում կան մարդիկ, վորոնց կարծիքի հետ հաշվի պետք ե նստել: Ամեն մի կոլեգիայում, ամեն մի կոլեկտիվում կան մարդիկ, վորոնք կարող են

սիսալ կարծիքներ ել հայտնել: Յերեք հեղափոխության փորձի հիման վրա մենք գիտենք, վոր կոլեկտիվության չստուգված, չուղղված 100 միանձնյա վճիռներից մոտավորապես 90 վճիռը միակողմանի յէ: Մեր ղեկավարության կենտրոնական կոմիտեյում, վորը ղեկավարում ե մեր բոլոր խորհրդային ու կուսակցական կազմակերպությունները, կա մոտ 70 անդամ: Կենտրոնի այս 70 անդամների մեջ են գտնվում մեր լավագույն արդյունաբերողները, մեր լավագույն կոռպերատորները, մեր լավագույն մատակարարները, մեր լավագույն զինվորականները, մեր լավագույն պրոպագանդիստները, մեր լավագույն ագիտատորները, խորհրդական անձնությունների մեր լավագույն գիտակները, կոլտանտեսությունների մեր լավագույն գիտակները, գյուղացիական անհատական տընտեսության մեր լավագույն գիտակները, Խորհրդային Միության ժողովուրդների և ազգային քաղաքականության մեր լավագույն գիտակները: Այս արեօպագումն է կենտրոնացած մեր կուսակցության իմաստությունը: Յուրաքանչյուրը հնարավորություն ունի ուղղելու վորեւ մեկի միանձնյա կարծիքը, առաջարկը: Յուրաքանչյուրը հնարավորություն ունի մտցնելու իր փորձը: Յեթե այս չլիներ, յեթե վճիռները միանձնաբար ընդունվեյին, մեր աշխատանքում մենք լրջագույն սխալներ կունենայինք: Իսկ քանի վոր յուրաքանչյուրը հնարավորություն ունի ուղղելու առանձին անձերի սխալները, և քանի վոր մենք հաշվի յենք նստում այս ուղղումների հետ, մեր վճիռները քիչ թե շատ ճիշտ են ստացվում:

Լուդվիգ: Դուք տասնյակ տարիներ ընդհատակյա աշխատանք եք կատարել: Զեղ վիճակվել ե

ընդհատակյա ձեռվլ թե՛ զենք տեղափոխել, թե՛ դրա-  
կանություն և այլն: Դուք արդյոք չե՞ք գտնում, վոր  
խորհրդային իշխանության թշնամիները կարող են ըն-  
դորինակել Զեր փորձը և կովել խորհրդային իշխա-  
նության դեմ նույն այդ մեթոդներով:

Ս տ ա լ ի ն: Դա, իհարկե, միանդամայն հնա-  
րավոր է:

Լ ո ւ դ վ ի գ: Արդյոք դա չե՞ Զեր իշխանու-  
թյան խստության ու անողոքության պատճառը իր  
թշնամիների դեմ մղած պայքարում:

Ս տ ա լ ի ն: Վո՞չ, այդ չե գլխավոր պատճա-  
ռը: Կարելի յե միջանի պատճական որինակներ բերել:  
Յերբ բոլցեկիները իշխանության գլուխ անցան, նրանք  
իրենց թշնամիների նկատմամբ սկզբներում մեղմ վե-  
րաբերմունք ելին ցույց տալիս: Մենչեկիները շարու-  
նակում ելին գոյություն ունենալ լեզար կերպով և  
հրատարակում ելին իրենց թերթը: Եսերները նույն-  
պես շարունակում ելին գոյություն ունենալ լեզար  
կերպով և ունեյին իրենց թերթը: Մինչեւ անդամ կա-  
դետները շարունակում ելին հրատարակել իրենց թեր-  
թը: Յերբ գեներալ կրասնովը հակահեղափոխական  
արշավանք կազմակերպեց Լենինգրադի վրա և ընկալ  
մեր ձեռքը, մենք, պատերազմական ժամանակի պայ-  
մանների համաձայն, կարող ելինք նրան առնվազն  
պահել գերության մեջ, դեռ ավելին՝ մենք պետք ե  
վոր նրան գնդակահարելինք: Իսկ մենք նրան արձա-  
կեցինք՝ «ազնիվ խոսքով»: Յեվ ի՞նչ: Շուտով պարզ-  
վեց, վոր այդորինակ մեղմությունը միայն խարխում  
և խորհրդային իշխանության ամրությունը: Մենք  
սխալ գործեցինք՝ այդպիսի մեղմություն ցուցաբերե-  
լով բանվոր դասակարգի թշնամիների վերաբերմաբ:

Յեթե մենք այնուհետև ել կրկնելինք այդ սիսալը,  
մենք հանցանք գործած կլինելինք բանվոր դասակարգի  
վերաբերմաբ, մենք դավաճանած կլինելինք նրա շա-  
հերին: Յեվ դա կարճ ժամանակ անց միանդամայն  
պարզ դարձավ: Շատ շուտով պարզվեց, վոր ինչքան  
մենք ավելի մեղմ ենք վերաբերվում դեպի մեր թշնա-  
միները, այնքան ավելի դիմադրություն են ցույց տա-  
լիս այդ թշնամիները: Շուտով աջ եսերները—Գոցը և  
ուրիշները—և աջ մենշևիկները լենինցրազում կազմա-  
կերպեցին յունկերների հակահեղափոխական յելույթը,  
վորի հետևանքով վոչնչացան մեր հեղափոխական նա-  
վաստիներից շատերը: Այդ նույն կրասնովը, վորին  
մենք բաց թողինք «ազնիվ խոսքով», կազմակերպեց  
սպիտակ-գվարդիական կազմակերին: Նա միացավ Մա-  
մոնտովի հետ և յերկու տարի շարունակ զինված կոփի  
եր մղում խորհրդային իշխանության դեմ: Շուտով  
բանից դուրս յեկավ, վոր այդ սպիտակ գեներալների  
հետևում կանգնած ելին արևմտյան կապիտալիստական  
յերկրների—Ֆրանսիայի, Անգլիայի, Ամերիկայի, Ճա-  
պոնիայի—գործակալները: Մենք համոզվեցինք այն  
բանին, թե վորքան մենք սխալված ենք յեղել՝ մեղ-  
մություն ցուցաբերելով: Մենք փորձեց հասկացանք,  
վոր այս թշնամիների հետ կարելի յե գլուխ յելնել մի-  
այն այն գեղագում, յեթե նրանց նկատմամբ գործա-  
գրենք ճնշման ամենաանողոք քաղաքականությունը:

Լ ո ւ դ վ ի գ: Ինձ թվում ե, թե Միության  
բնակչության նշանակելի մասը յերկյուղի, վախի  
զգացմունք ունի խորհրդային իշխանության հանդեպ,  
և վոր յերկյուղի այս զգացմունքի վրա յե վորոշ չա-  
փով հենվում խորհրդային իշխանության կարունու-  
թյունը: Յես կուզենայի խմանալ, թե անձամբ Զեր մեջ

Հոգեկան ի՞նչ վիճակ ե ստեղծվում՝ այն գիտակցությունն ունենալով, թե հոգուտ իշխանության ամրացման պետք է յերկուող ներշնչել: ԶԵ՞ վոր Զեր ընկերների, Զեր բարեկամների հետ շփում ունենալիս Դուք բոլորովին այլ մեթոդներով եք զործում, և վոչ թե վախ ներշնչելու մեթոդներով, իսկ բնարկչությանը յերկուող է ներշնչվում:

Ս տ ա լ ի ն: Դուք սխալվում եք: Ասենք՝ Զեր սխալը շատերի սխալն ե: Մի՞թե կարծում եք Դուք, թե 14 տարվա ընթացքում կարելի կլիներ պահել իշխանությունը և ունենալ միլիոնավոր մասսաների աջակցությունը՝ չնորդիվ ահարկման ու սարսափահարման մեթոդի: Վո՞չ, այդ անհնարին ե: Բոլորից լավ կարողանում եր վախեցնել ցարական կառավարությունը: Նա այդ բնադրավառում հին հսկայական փորձ ուներ: Յելլոպական, մասնավորապես Փրանսական բուրժուազիան այս բանում ամեն կերպ ոգնում եր ցարիզմին և սովորեցնում եր նրան սարսափեցնել ժողովրդին: Զնայած այս փորձին, չնայած յելլոպական բուրժուազիայի ցույց տված ոգնությանը՝ սարսափահարման քաղաքականությունը հասցըեց ցարիզմի կործանմանը:

Լ ո ւ դ վ ի գ: Բայց չե՞ վոր Ռոմանովները 300 տարի դիմացան:

Ս տ ա լ ի ն: Այո՛: Բայց այդ 300 տարվա ընթացքում վորքա՛ն ապստամբություններ ու խոռվություններ են յեղել. Ստենկա Ռազինի ապստամբությունը, Յեմելյան Պուգաչովի ապստամբությունը, Պեկարիստանների ապստամբությունը, 1905 թվականի հեղափոխությունը, 1917 թ. փետրվարի հեղափոխությունը, Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Յես այլես չեմ խոսում այն մասին, վոր յերկրի քաղաքական ու կուլտուրական կյանքի ներկա պայմանները արմատապես տարբերվում են հին ժամանակվապայմաններից, յերբ մասսաների տգիտությունը, անկուլտուրականությունը, հլու-հնագանդությունը այն ժամանակա «կառավարիչներին» հնարավորություն եյին տալիս՝ ավելի կամ պակաս տեղությամբ կանգնած մնալու իշխանության գլուխ:

Ինչ վերաբերում է ժողովրդին, ինչ վերաբերում է ԽՍՀՄ բանկոներին ու գյուղացիներին, ապա նրանք ամենեին ել այնպես հանդարս հլու-հնագանդ ու վախեցած չեն, ինչպես Դուք պատկերացնում եք նրանց: Յեվրոպայում շատերը ԽՍՀՄ մարդկանց պատկերացնում են ըստ հնի, կարծելով, թե Ռուսաստանում ապրում են մարդիկ, վորոնք նախ՝ հլու-հնագանդ են, յերկրորդ՝ ծույլ են: Սա հնացած և իր արմատում սխալ պատկերացում ե: Այդ պատկերացումը Յեվրոպայում ստեղծվել եայն ժամանակներից, յերբ ոկտեսին Փարիզ գնալ-հավաքվել ոռու կալվածատերերը, այնտեղ վատնում եյին թալանած փողերն ու թրե եյին գալիս: Դրանք իրոք վոր կամազուրկ ու անպետք մարդիկ եյին: Սրանից ել յեղակացություններ եյին անում «ոռուսական ծովության» մասին: Բայց սա վոչ մի չափով չի կարող վերաբերել ոռուսական բանվորներին ու գյուղացիներին, վորոնք ապրուստի միջոցներ են հայթայթել ու հայթայթում են իրենց սեփական աշխատանքով: Բավականին տարորինակ բան ե հլու-հնագանդ ու ծույլ համարել այն ոռուսական գյուղացիներին ու բանվորներին, վորոնք կարճ ժամանակամիջոցում յերեք հեղափոխություն կատարեցին, վորոնք

չարդումիշուք արին ցարիզմն ու բուրժուազիային և  
ներկայումս հաղթականորեն սոցիալիզմ են կերտում:  
Դուք հենց նոր ինձ հարցնում եյթք, թե մեզանում  
արդյոք ամեն ինչ վճռողը մի մարդ է: Մեր բանվոր-  
ները յերբեք, վոչ մի պարագայում այժմ չեյին հան-  
գուրդի մի անձի իշխանությունը: Մեզանում ամենա-  
խոչոր հեղինակությունները իշթք են դառնում, վոչնչու-  
թյան են վերածվում, հենց վոր բանվորական մասսա-  
ները դադարում են նրանց վստահելուց, հենց վոր  
նրանք կորցնում են բանվորական մասսաների հետ ու-  
նեցած կոնտակտը: Պլեխանովը միանդամայն բացառիկ  
հեղինակություն եր վայելում: Յեվ ի՞նչ: Հենց վոր  
նա պկեց քաղաքականակեա կաղալ, բանվորները նրան  
մոռացության տվին, հեռացան նրանից ու մոռացան  
նրան: Մի այլ որինակ,—Տրոցկին: Տրոցկին նույնպես  
մեծ հեղինակություն եր վայելում, իհարկե, ամենեին  
վոչ այնպիսի հեղինակություն, ինչպես Պլեխանովը:  
Յեվ ի՞նչ. հենց վոր նա բանվորներից հեռացավ,  
նրան մոռացան:

Լուդիկ: Բոլորովին մոռացան:

Ստալին: Յերբեմն մտաբերում են, —զայ-  
բույթով:

Լուդիկ: Բոլորը դայրույթով:

Ստալին: Ինչ վերաբերում ե մեր դիտակից  
բանվորներին, ասա նրանք Տրոցկու մասին հիշում են  
դայրույթով, ջղայնությամբ, առելությամբ:

Իհարկե, կա բնակչության մի փոքր մաս, վորն  
իրոք վախենում ե խորհրդային իշխանությունից և  
պայքարում ե նրա դեմ: Յես նկատի ունեմ մեռնող,  
վերացվող դասակարգերի մնացորդները և ամենից ա-

ռաջ՝ գյուղացիության մի աննշան մասը—կուլակու-  
թյունը: Բայց այստեղ խոսքը միայն սարսափահարման  
քաղաքականության մասին չե, վոր իրոք վոր գոյու-  
թյուն ունի: Բոլորին հայտնի յե, վոր մենք, բոլշևիկ-  
ներս, այստեղ միայն սարսափահարմամբ չենք սահմա-  
նափակվում և ավելի հեռու յենք գնում՝ գործը տա-  
նելով գեղի բուրժուական այդ միջնախալի վերացու-  
մը:

Բայց յեթե վերցնելու լինենք ԽՍՀՄ աշխատավոր  
բնակչությունը,—բնակչության 90%-ից վոչ պակասը  
կազմող բանվորներին ու աշխատավոր գյուղացինե-  
րին,—ապա նրանք խորհրդային իշխանության կողմն  
են, և նրանց ճնշող մեծամասնությունն ակտիվորեն  
պաշտպանում ե խորհրդային ռեժիմը: Իսկ խորհրդա-  
յին հասարակակարգը նրանք պաշտպանում են այն  
պատճառով, վոր այս հասարակակարգը սպասարկում  
ե բալորների ու գյուղացիների արմատական շահերը:  
Այս ե խորհրդային իշխանության հաստատության  
հիմքը, և վոչ թե այսպես կոչված՝ սարսափահարման  
քաղաքականությունը:

Լուդիկ: Յես շատ չնորհակալ եմ Զեզանից  
այս պատասխանի համար: Խնդրում եմ Զեզ՝ ներեք  
ինձ, յեթե յես Զեզ տամ մի հարց, վորը Զեզ կարող  
ե տարրորինակ թվալ: Զեր կենսագրության մեջ կան  
այսպես ասած՝ «ավագակային» յելույթների մոմենտ-  
ներ: Արդյոք Դուք հետաքրքրվե՞լ եք Ստեփան Ռազինի  
անձնավորությամբ: Ի՞նչպես ե Զեր վերաբերմունքը  
դեպի նա, վորպես «գաղափարական ավագակի»:

Ստալին: Մենք, բոլշևիկներս, միշտ ել հե-  
տաքրքրվել ենք պատմական այնպիսի անձնավորու-  
թյուններով, վորպիսիք են Բոլոտնիկովը, Ռազինը,

Պուգաչովը և ուրիշները: Այդ մարդկանց յելույթներում մենք տեսել ենք ճնշված դասակարգերի տարերային խոռվության, Փեղալական հարստահարման դեմ գյուղացիության ունեցած տարերային ապստամբության արտացոլումը: Մեզ համար միշտ ել շահեկան ե յեղել գյուղացիության նմանորինակ ապստամբությունների առաջնորդները: Բայց, իհարկե, այստեղ վորեւ անալոգիա անցկացնել բոլցեկիների հետ՝ չի կարելի: Գյուղացիական առանձին ապստամբությունները, նույնիսկ այն դեպքում, յեթե նրանք այնպես ավագակային ու անկազմակերպ չեն, ինչպես Ստենկա Ռազինի մոտ ե, վոչ մի լուրջ հետեանքի չեն կարող հասցնել: Գյուղացիական ապստամբությունները կարող են հաջողության հանդեցնել միայն այն դեպքում, յեթե նրանք զուգակցվում են բանվորական ապստամբությունների հետ, և յեթե գյուղացիական ապստամբությունները զեկավարում են բանվորական բուժությունները կարգի սրանից, խոսելով Ռազինի ու Պուգաչովի մասին՝ յերեք չպետք ե մոռանալ, վոր նրանք ցարիստներ եյին. նրանք հանդես եյին գալիս կալվածատերերի դեմ, բայց «լավ ցարի» կողմն եյին: Զե՞ վոր այդպես ե յեղել նրանց լոգունքը:

Ինչպես տեսնում եք, անալոգիան բոլցեկիների հետ վոչ մի կերպ հարմար չի դալիս:

Լուսնի կողմէ գյուղ Զեզ միքանի հարց տալու Ձեր կենսագրության վերաբերյալ: Յերբ յես Մասարիկի մոտ եյի, նա ինձ հայտնեց, թե իրեն առցիւխտ ե գիտակցել ակսած արդեն Յամյա հասակից:

Զեզ սոցիալիստ դարձնողը ի՞նչն ե յեղել և յեղել:

Ստալին: Յես չեմ կարող պնդել, թե յես արդեն 6 տարեկանից սկսած ձգտում եմ ունեցել զեպի սոցիալիզմը: Յեզ անգամ վոչ ել 10 կամ 12 տարեկանից սկսած: Հեղափոխական շարժման մեջ յես մտել եմ 15 տարեկան հասակիցս, յերբ յես կապվեցի այն ժամանակ Անդրկովկասում ապրող ոռւս մարքսիստների ընդհատակյա խմբերի հետ: Այդ խմբերը ինձ վրա մեծ ազդեցություն ունեցան և մարքսիստական ընդհատակյա գրականության ճաշակ պատվաստեցին ինձ:

Լուսնի կողմէ գյուղ Զեզ մղեց գեղի ոպողիցիականություն: Թերեւս ծնողների կողմից յեղած վատ վարմունքը:

Ստալին: Վոչ. ծնողներս անուսում մարդիկ եյին, բայց հետո բոլորովին ել վատ չեն վարվել: Ռւբեկ բան ե հոգեբոր սեմինարիան, վորտեղ յես սովորում եյի այն ժամանակ: Սեմինարիայում յեղած ծաղրուծանակային ոեժիմի ու յեղիլիտական մեթոդների դեմ բողոքելուց յես պատրաստ եյի դառնալու և իրոք դարձա հեղափոխական, —մարքսիզմի՝ վորպես իրոք հեղափոխական ուսմունքի կողմնակից:

Լուսնի կողմէ: Բայց մի՞թե Դուք չեք ընդունում յեղիլիտական հատկությունները:

Ստալին: Այս', նրանք ունեն սիստեմատիկություն, հաստատակամություն աշխատանքի մեջ: Բայց նրանց հիմնական մեթոդը՝ դա գաղտնի հետապնդումն ե, լրտեսությունը, հոգու ներսը սողոսկելը, ծաղրուծանակն ե, —սրա մեջ ի՞նչ դրական բան կարող ե լինել: Որինակ, գաղտնի հետապնդումը պանսիոնատում. ժամի 9-ին թեյի զանդն ե, գնում ենք ոեղա-



նատում, իսկ յերբ վերադառնում ենք մեր սենյակները, գուրս ե զալիս, վոր արդեն այս ժամանակամիջոցում խողարկելու տակնության յեն արել իրեղենի մեր բոլոր արկղները... Սրանում ի՞նչ դրական բան կարող է լինել:

Լուդվիգի կողմէ Խորհրդային Միության մեջ յես զիտում եմ բացառիկ հարդանք դեպի այն ամենը, ինչ ամերիկական ե, յես նույնիսկ կասեյի՝ խոնարհում այն ամենի առջև, ինչ ամերիկական ե, այսինքն՝ խոնարհում գոլլարի յերկրի, կապիտալիստական ամենահետեւղական յերկրի առջև։ Այս զգացմունքները կան նաև Ձեր բանվոր դասակարգի մեջ, և նրանք վերաբերում են վո՞չ միայն տրակտորներին ու ավտոմոբիլներին, այլ նաև առհասարակ ամերիկացիներին։ Դուք ինչո՞վ եք բացատրում այս բանը։

Ստալին։ Դուք չափազանցում եք։ Մեզանում վոչ մի առանձին հարդանք չկա դեպի ամեն ինչ, վոր ամերիկական ե։ Բայց ամերիկյան գործարարությունը մենք հարդում ենք ամեն ինչում—արդյունաբերության մեջ, տեխնիկայի մեջ, գրականության մեջ, կյանքում։ Մենք յերեք չենք մոռանում այն ժաման, վոր ՀԱՄՆ-ը կապիտալիստական յերկրը ե։ Բայց ամերիկացիների մեջ հոգեկան ու Փիզիկական կողմից շատ առողջ մարդիկ կան, առողջ՝ դեպի աշխատանքը, դեպի գործն ունեցած իրենց ամբողջ մոտեցմամբ։ Այս գործարարությունը, այս պարզությունն ե, վորին մենք համակը լուսակում ենք։ Զնայած այն բանին, վոր Ամերիկան կապիտալիստական բարձր զարգացած յերկրը ե, այնտեղ բարքերը արդյունաբերության մեջ, ունակություններն (համար) արտադրության մեջ պարունակում են դեմոկրատիզմից մի բան,

ինչ վոր չի կարելի ասել յեվրոպական հին կապիտամիստական յերկըների մասին, վորտեղ մինչև այժմ եւ ապրում ե ֆեոդալական արիստոկրատիայի աղայության վոգին։

Լուդվիգի կողմէ Ձեր մտքով անդամ չի անցնում, թե Դուք վորքան իրավացի յեք։

Ստալին։ Ի՞նչ գիտենանք, գուցե և մտքովս անցնում ե։ Զնայած այն բանին, վոր Փեոդալիզմը, վորպէս հասարակարգ, վաղուց և Յեվրոպայում ջախջախած, նրա զգալի մնացուկները շարունակում են գոյություն ունենալ թե՛ կենցաղում և թե՛ բարգերում։ Ֆեոդալական միջավայրը շարունակում ե իրենից տալ թե՛ տեխնիկներ, թե՛ մասնագետներ, թե՛ գիտնականներ, թե՛ գրողներ, վորոնք աղայական բարքերը մտցնում են արդյունաբերության, տեխնիկայի, գիտության, գրականության մեջ։ Ֆեոդալական արագիտաները մինչև վերջը չեն ջախջախալած։ Այս բանը չի կարելի ասել Ամերիկայի մասին, վորը հանդիսանում ե «ազատ կոլոնիզատորների» յերկիր՝ առանց կալվածատերների, առանց արիստոկրատների։ Այստեղից—ամերիկյան հաստատուն և համեմատաբար պարզ բարքերը արտադրության մեջ։ Մեր Ամերիկա այցելած բանվոր-տնտեսավարները միանգամից դիտել են այս գիծը։ Նրանք վոչ առանց վորոշ հաճելի զարմանքի պատճում ենին, վոր Ամերիկայում արտադրության պրոցեսի ընթացքում արտաքուստ գժվար ե ինժեներին տարբերել բանվորից։ Յեշ սա, իշարկե, նրանց դուր ե գալիս։ Բոլորովին այլ ե բանը Յեվրոպայում։

Բայց յեթե վոր խոսելու լինենք դեպի վորեւե ազգ կամ ավելի ճիշտը՝ դեպի վորեւե ազգի մեծամասնության մեջ պարունակում են դեմոկրատիզմից մի բան,

թյունը մեր ունեցած համակրանքների մասին, ապա, իհարկե, պետք է խոսել մեր ունեցած համակրանքների մասին դեպի գերմանացիները։ Այս համակրանքների հետ չի կարելի համեմատել դեպի ամերիկացիները մեր տածած զգացմունքները։

Լուդվիգ: Ինչո՞ւ հենց դեպի գերմանական ազգը։

Ստալին: Յես ամենից առաջ հավաստում եմ այս բանը, վորպես փաստ։

Լուդվիգ: Վերջին ժամանակներս գերմանական վորոշ քաղաքագետների մեջ լուրջ յերկյուղ են կատվում, թե իՍՀՄ ու Գերմանիայի ավանդական բարեկամության քաղաքականությունը հետին պլան կմզկի։ Այս յերկյուղը ծագել է իՍՀՄ և Լեհաստանի միջև յեղած բանակցությունների կապակցությամբ։ Յեթե այս բանակցությունների հետևանքով փաստ դառնար Լեհաստանի ներկա սահմանների ճանաչումը իՍՀՄ կողմից, ապա դա մի ծանր հիասթափություն կնշանակեր գերմանական ամբողջ ժողովրդի համար, վորը մինչև այժմ կարծում է, վոր իՍՀՄ պայքարում է վերսալի սիստեմի դեմ և չի պատրաստվում ընդունելու այդ սիստեմը։

Ստալին: Յես գիտեմ, վոր գերմանական պետական գործիչներից վոմանց մեջ վորոշ գեգություն ու անհանգստություն են նկատվում այն առթիվ, թե չինի՞ Խորհրդային Միությունը Լեհաստանի հետ ունեցած իր բանակցություններում կամ վորևէ պայմանագրում մի այնպիսի քայլ անի, վորը նշանակեր, թե Խորհրդային Միությունը իր սանկցիան, յերաշխեցն ետալիս Լեհաստանի տիրապետությունների ու սահմանների վերաբերմամբ։ Իմ կարծիքով՝ այդ յեր-

կյուղը սիսալ է։ Մենք շարունակ հայտարարել ենք ամեն մի պետության հետ չհարձակման պակտ կնքելու մեր պատրաստակամության մասին։ Մի շարք պետությունների հետ մենք արդեն կնքել ենք այդպիսի պակտեր։ Մենք բացահայտորեն հայտարարել ենք նաև Լեհաստանի հետ նման պակտ ստորագրելու մեր պատրաստակամության մասին։ Յեթե մենք հայտարարում ենք, թե մենք պատրաստ ենք չհարձակման պակտ ստորագրելու Լեհաստանի հետ, ապա մենք այս բանն անում ենք վոչ թե ի սեր Փրազի, այլ նրա համար, վոր իրոք այդպիսի պակտ ստորագրենք։ Մենք, յեթե ուզում եք, առանձին տեսակի քաղաքագետներ ենք։ Կան քաղաքագետներ, վորոնք այսոր խոստանում կամ հայտարարում են մի բան, իսկ հետեւյալ որը կամ մոռանում, կամ ժխտում են այն, ինչի մասին նրանք հայտարարել են, և ընդունին, նույնիսկ չեն ել կարմըրում։ Մենք չենք կարող այդպիս վարվել։ Այն, ինչ յերկը դուրս ե կատարվում, անխուսափելիորեն հայտնի յեղանում յերկը ներսումն ել, հայտնի յեղանում բոլոր բանվորներին ու գյուղացիներին։ Յեթե մենք ասեյինք մի բան, իսկ անեյինք մի ուրիշ բան, ապա մենք կորցնելինք մեր հեղինակությունը։ Այն մոմենտին, յերբ լեհերը հայտարարեցին չհարձակման պակտի վերաբերյալ մեզ հետ բանակցություններ վարելու իրենց պատրաստակամության մասին, մենք, բնականաբար, համաձայնեցինք և ձեռնամուխ յեղանք բանակցություններին։

Գերմանացիների տեսակետից վերցրած՝ ի՞նչն է ամենալտանգավորն այն բանում, վոր կարող ե պատահել։ Գերմանացիների հետ ունեցած հարաբերությունների փոփոխումը, նրանց վատթարացո՞ւմը։

Բայց դրա համար վոչ մի հիմք չկա։ Մենք ճիշտ այնպես, ինչպես և լեհերը, պակտում պետք է հայտարարենք, վոր բոնություն, հարձակում չենք դործադրելու նրա համար, վոր փոխենք լեհաստանի, ԽՍՀՄ սահմանները կամ խախտենք նրանց անկախությունը։ Այսպես, ինչպես վոր մենք ենք այս խոստումը տալիս լեհերին, ճիշտ նույնպիսի խոստում ել նրանք են մեղտ տալիս։ Առանց մի այսպիսի կետի այն մասին, թե մենք չենք պատրաստվում պատերազմ մղելու, վոր մեր պետությունների անկախությունը կամ սահմանների ամբողջությունը խախտենք, առանց այլպիսի կետի չի կարելի պակտ կնքել։ Առանց դրան պակտի ժամանակում հարկ ել չկա։ Այս ե այն բանի մաքսիմումը, ինչ մենք կարող ենք անել։ Արդյոք սա հանդիսանո՞ւմ ե վերսալի սիստեմի ընդունում։ Վո՛չ։ Կամ թերես սա սահմանների յերաշխավորո՞ւմ ե հանդիսանում։ Վո՛չ։ Մենք յերեք չենք յեղել լեհաստանի յերաշխավոր և այդպիսին յերեք ել չենք լինի այնպես, ինչպես վոր լեհաստանը չի յեղել և չի ել լինի մեր սահմանների յերաշխավորը։ Գերմանիայի հետ ունեցած մեր բարեկամական հարաբերությունները մնում են այնպես, ինչպես վոր յեղել են մինչև այժմ։ Այս ե իմ հաստատուն համոզմունքը։

Այսպիսով, այն յերկուզը, վորի մասին Դուք խոսում եք, ամենենին հիմնավորված չե։ Այդ յերկուզը ծագել ե այն լուրերի հիման վրա, վոր տարածում ելին լեհերից ու ֆրանսացիներից վոմանք։ Այդ յերկուզը կչքանա, յերբ մենք հրապարակենք պակտը, յեթե այն ստորագրվի լեհաստանի կողմից։ Բոլորը կտեսնեն, վոր նա վոչինչ չի պարունակում ընդունակ գերմանիայի։

Լունդի կիզակերպության համար։ Թույլ տվեք Զեղ տալ հետեւալ հարցը։ Դուք խոսում եք «Հայաստարեցման» («յարանլօվկա») մասին, ըստվորում՝ այդ բառն ունի հեգնական վորոշ յերանգավորում համընդհանուր հայաստարման վերաբերմամբ։ Բայց չե՞ վոր համընդհանուր հավասարումը սոցիալիստական իդեալ է։

Ստալին։ Այնպիսի սոցիալիզմ, վորի ժամանակ բոլոր մարդիկ ստանային միենույն վարձը, միենույն քանակությամբ միս, միենույն քանակությամբ հաց, կրեյխն միատեսակ հագուստներ, ստանային միատեսակ մթերքներ միենույն քանակությամբ, — այսպիսի սոցիալիզմ մարքսիզմը չի ճանաչում։ Մարքսիզմը միայն մի բան ե ասում։ քանի դասակարգերը վերջնականապես դեռ չեն վոչնչացված, և քանի աշխատանքը գոյության միջոց լինելուց դեռ չի դարձել կյանքի առաջին պահանջմունքը, չի դարձել կամավոր աշխատանք հասարակության համար, մարդիկ իրենց կատարած դորձի համար վարձատրություն են ստանալու ըստ աշխատանքի։ «Յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի»—այս ե սոցիալիզմի մարքսիստական Փորմուլան, այսինքն՝ կոմունիզմի առաջին ստալիստայի, կոմունիստական հասարակության առաջին ստալիստի Փորմուլան։ Միմիայն կոմունիզմի բարձրագույն ստալիստում, միմիայն կոմունիզմի բարձրագույն փուլի ժամանակ յուրաքանչյուրը, աշխատելով համապատասխան իր ընդունակությունների՝ իր աշխատանքի համար ստանալու յե համապատասխան իր պահանջմունքների։ «Յուրաքանչյուրից՝ ըստ

ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքների»:

Միանդամայն պարզ է, վոր աարբեր մարդիկ ունեն և սոցիալիզմի ժամանակ ել ունենալու յեն տարբեր պահանջմունքներ։ Սոցիալիզմը յերբեք ել չի ժխտել ճաշակների, պահանջմունքների քանակի ու վորակի տարբերությունը։ Կարգացեք, թե Մարքսը ի՞նչպես եր քննադատում Շտիլներին՝ հալասարեցման նրա տենդենցի համար, կարդացեք 1875 թվականի Գոթայի ծրագրի Մարքսի քննադատությունը, կարդացեք Մարքսի, Ենդեւսի, Լենինի հետագա աշխատությունները, և Դուք կտեսնեք, թե նրանք ի՞նչպես կտրուկ կերպով են հարձակվում հալասարեցման վրա։ Հավասարեցման աղբյուրը գյուղացիական մտածելակերպն է, բոլոր բարեկաների հավասարապես բաժանելու հոգեբանությունը, գյուղացիական պրեմիսիվ «կոմունիզմի» հոգեբանությունը։ Հավասարեցումը մարքսիստական սոցիալիզմի հետ վոչ մի ընդհանուր բան չունի։ Միայն մարքսիզմին անձանթ մարդիկ կարող են բանը պատկերացնել այնպես պրիմիտիվորեն, թե, իբրև, ոռուսական բոլշևիկներն ուզում են բոլոր բարեկաներն ի մի հավաքել և ապա բաժանել այդ բարեկաները հավասարապես։ Բանը այսպես են պատկերացնում մարդիկ, վորոնք մարքսիզմի հետ վոչ մի ընդհանուր բան չունեն։ Կոմունիզմն այսպես եյին պատկերացնում կրոմքելի և ֆրանսական հեղափոխության ժամանակների պրիմիտիվ «կոմունիստների» նման մարդիկ։ Բայց մարքսիզմն ու ոռուսական բոլշևիկները վոչ մի ընդհանուր բան չունեն հավասարական նմանորինակ «կոմունիստների» հետ։

Լուգարիտմը պատկերում է պատահական ծխամորձը։

Իրոն Ստալին, ո՞ւր ե Զեր առասպելական ծխամորձը։ Դուք յերեմն ասել եք, թե խոսքերն ու լեզենդներն անցնում են, մնում են գործերը։ Բայց հավատացեք, վոր Զեր խոսքերից ու գործերից վոմանց մասին արտասահմանում բան չգիտող միլիոնավոր մարդիկ գիտեն Զեր առասպելական ծխամորձի մասին։

Ստալինը Յես ծխամորձս տանն եմ մոռացել։

Լուգարիտմը Յեզ մի հարց կտամ, վորը Զեզ կարող ե սաստիկ զարմացնել։

Ստալինը Ուենք՝ ոռուսական բոլշևիկներս, գաղուց դադարել ենք զարմանալուց։

Լուգարիտմը Ասենք՝ մենք ել Գերմանիայում նույնպես։

Ստալինը Այսու, Դուք չուտով կդադարեք Գերմանիայում զարմանալուց։

Լուգարիտմը Իմ հարցը հետևյալն է. Դուք հաճախ յենթակա յեք յեղել ովակի ու վտանգի, Զեզ հալածել են։ Դուք մասնակցել եք մարտերի։ Զեր մի շարք մոտ բարեկամները վոչչացել են։ Դուք վողջ եք մնացել։ Այս բանը Դուք ինչո՞վ եք բացատրում։ Յեզ արդյոք Դուք հավատո՞մ եք ճակատագրին։

Ստալինը Վո՞չ, չեմ հավատում։ Բոլշևիկները, մարքսիստները, «ճակատագրին» չեն հավատում։ Ճակատագրի գաղափարն ինքը, «շիկզալի» գաղափարը՝ նախապաշարմունք ե, դատարկ մի բան, դիցարանության մնացուկ, հին հույների դիցարանության նման, վորոնց մոտ ճակատագրի աստվածուհին եք մարդկանց կյանքին ուղղություն տալիս։

Լուգարիտմը Նշանակում է՝ պատահականու-

թյո՞ւն ե այն փաստը, վոր Դուք չեք վոչնչացել:

Ս տ ա լ ի ն: Կան թե՛ ներքին և թե՛ արտաքին պատճառներ, վորոնց միակցության (СОВОՐУННОСТЬ) հետեանքն այն է յեղել, վոր յես չեմ - վոչնչացել: Բայց բոլորովին սրանից անկախ՝ իմ տեղում կարող եր լինել մի ուրիշը, վորովհետեւ մեկը պետք է այստեղ նստած լիներ: «Ճակատագիրը»—դա մի անորինաչափ, մի միստիկական բան է: Յես միստիկային չեմ հավատում. իհարկե, պատճառներ են յեղել այն բանի, վոր վասնդներն իմ կողքով են անցել: Բայց կարող եյին տեղի ունենալ մի շարք այլ պատահականություններ, մի շարք այլ պատճառներ, վորոնք կարող եյին հանդեցնել ուղղակի հակադիր հետեանքի: Այսպես կոչված ճակատագիրն այստեղ գործ չունի:

Լ ո ւ դ վ ի գ: Լենինը յերկար տարիներ անց է կացրել արտասահմանում, եմիգրացիայի մեջ: Զեզ վիճակվել ե արտասահմանում չատ կարճ ժամանակ լինել: Արդյոք Դուք այս բանը համարո՞ւմ եք Զեր պակասությունը, արդյոք Դուք դանո՞ւմ եք, վոր հեղափոխությանն ավելի ոգուտ են ավել այն մարդիկ, վորոնք, գտնվելով արտասահմանյան եմիգրացիայի մեջ, Յելբոպան մոտիկից ուսումնասիրելու հնարավորություն են ունեցել, բայց դրա փոխարեն՝ կտրված են յեղել ժողովրդի հետ անմիջական կոնտակտ ունենալուց, —թե՞ հեղափոխությանն ավելի ոգուտ են ավել հեղափոխականներից նրանք, ովքեր այստեղ են աշխատել, դիտցել են ժողովրդի տրամադրությունը, բայց դրա փոխարեն՝ քիչ են ճանաչել Յելբոպան:

Ս տ ա լ ի ն: Լենինին պետք է դուրս հանել այս համեմատությունից: Ուսուսաստանում մնացածներից շատ քչերն են այնքան սերտորեն կապված յեղել ոու-

սական իրականության հետ, յերկրի ներսի բանվորական շարժման հետ, ինչպես լենինը, թեեւ նա յերկար ժամանակ յեղել է արտասահմանում: Միշտ, յերբ յես նրա մոտ եյի գնում արտասահման—1907, 1908, 1912 թվականներին— յես նրա մոտ տեսնում եյի նամակների կույտեր Ուսուսաստանում աշխատող պրակտիկներից, և միշտ ել լենինն ավելի շատ բան է իմացել, քան նրանք, ովքեր Ուսուսաստանումն ելին մնում: Արտասահմանում մնալը նա շարունակ իր համար մի ծանր բռու եր համարում:

Իհարկե, մեր կուսակցության ու նրա ղեկավարության մեջ շատ ավելի յեն այն ընկերները, վորոնք Ուսուսաստանումն են մնացել, վորոնք արտասահման չեն գնացել, քան նախկին եմիգրանտները, և նրանք, իհարկե, հեղափոխությանն ավելի շատ ոգուտ տալու հնարավորություն են ունեցել, քան արտասահմանում գտնված եմիգրանտները: Զե՞ վոր մեզանում կուսակցության մեջ եմիգրանտներ քիչ են մնացել: Կուսակցության 2 միլիոն անդամներից եմիգրանտ յեղած կլինեն 100—200: Կենակոմի 70 անդամների թվից հազիվ թե 3—4 ից ավելին ապրած լինեն եմիգրացիայի մեջ:

Ինչ վերաբերում է Յելբոպային ծանոթ լինելուն, Յելբոպան ուսումնասիրելուն, ապա, իհարկե, նրանք, ովքեր ուղեցել են ուսումնասիրել Յելբոպան, այդ բանն անելու ավելի հնարավորություն են ունեցել՝ գտնվելով Յելբոպայում: Յեզ մեզանից նրանք, ովքեր արտասահմանում յերկար ժամանակ չեն ապրել, այս իմաստով՝ մի բան կորցրել են: Բայց յելբոպական եկոնոմիկան, տեխնիկան, բանվորական շարժման կազմերը, ամեն տեսակի՝ բելետրիստական կամ

գիտական՝ գրականություն ուսումնասիրելու համար արտասահմանում լինեն ամենեին ել վճռողական նշանակություն չունի։ Այլ հավասար պայմաններում, իհարկե, Յեվրոպան ավելի հեշտ և ուսումնասիրել՝ գտնվելով այստեղ։ Բայց մեծ նշանակություն չունի այն մինումը, վոր ստացվում է Յելքոպայում յերկար ժամանակ չմնացած մարդկանց մոտ։ Բնդհակառակը, յես շատ ընկերներ գիտեմ, վորոնք 20-ական տարով ապրել են արտասահմանում, ապրել են այնտեղ Շառլոտտենբուրգում կամ Լատինական թաղամասում, տարիներով նստուծ են յեղել սրճարաններում, գարեջուր են խմել և այնուամենայնիվ, չեն կարողացել Յեվրոպան ուսումնասիրել ու չեն հասկացել նրան։

Լուդվիգի գ։ Արդյոք Դուք չե՞ք գտնում, վոր գերմանացիների մոտ, իբրև ազդի մոտ, սերը դեպի կարգ ու կանոնն ավելի յե զարգացած, քան աղատության սերը։

Ստալին։ Մի ժամանակ Գերմանիայում իրոք շատ եյին հարցում որենքները։ 1907 թվականին, յերբ ինձ վիճակինց ապրել Բեռլինում 2—3 ամիս, մենք, ուսաւկան բոլեկիներս, հաճախ ծիծաղում եյինք մեր գերմանացի ընկերներից վոմանց վրա՝ դեպի որենքներն ունեցած այս հարգանքի առթիվ։ Որինակ, անեկոտ եր պտտվում այն մասին, թե, յերը Բեռլինի սոցիալ-դեմոկրատական Փորշտանդը\* վորոշ որ ու վորոշ ժամին ցույց եր նշանակել, վորին պետք ե գային բոլոր արվարձաններից կազմակերպության ան-

\* Ֆորշտանդ—վարչություն, գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության կենտրոնական կոմիտեն։

գամմները, մի արվարձանից 200 մարդուց բաղկացած մի խումբ թերեւ իր ժամանակին նշանակված ժամին յեկած ե յեղել քաղաք, բայց ցույցին չի հասել, վորովհետեւ յերկու ժամ շարունակ կանգնած ե յեղել կույտականի պերընում և պերընը թողնելու սիրտ չի յարանի պերընում և պերընը թողնելու ժամանակ տոմսերը արել, վորովհետեւ դուրս գալու ժամանակ կամ տոմսերը վերցնող կոնտրոլյորը բացակա յե յեղել և վոչ վոք չի յեղել, վորին հանձնելին տոմսերը։ Կատակով չի յեղել, վորի կարիք ե յեղել հանդես գալու պատմում եյին, վոր կարիք ե յեղել հանդես գալու մի ոռւս ընկերոջ, վորը գերմանացիներին ցույց ե տվել գրությունից դուրս գալու պարզ միջոցը։ պերընից դուրս գալ՝ չհանձնելով տոմսերը։

Բայց մի՞թե այժմ Գերմանիայում դրա նման բան գոյություն ունի։ Մի՞թե այժմ Գերմանիայում հարգում են որենքները։ Մի՞թե նույն այդ նացիոնալ-սոցիալիստները, վորոնք, թվում եր, թե ամենքից ավելի ցանքավոր են բուրժուական որինականության պահապան պիտին, չե՞ն ջարդում այդ որենքները, չե՞ն բանդում բանվորական ակումբները և անպատճի կերպով չե՞ն սպանում բանվորներին։ Յես այլես չեմ խոսում բանվորների մասին, վորոնք, ինչպես թվում ե ինձ, վաղուց ե արդեն կորցրել են հարգանքը դեպի բուրժուական որինականությունը։ Այսո՛, վերջին ժամանակներս զերմանացիները զգալիորեն փոխվել են։

Լուդվիգի գ։ Ի՞նչ պայմաններումն ե հնարավոր բանվոր դասակարգի վերջնական ու լիակատար միավորումը մի կուսակցության ղեկավարությամբ։ Ինչո՞ւ բանվոր դասակարգի այդպիսի միավորումը, ինչպես կոմունիստներն են ասում, հնարավոր ե միայն պրոլետարական հեղափոխությունից հետո։

Ստալին։ Բանվոր դասակարգի նմանորի-

նակ միավորումը կոմունիստական կուսակցության  
շուրջը՝ ամենից հեշտությամբ կարող ե իրագործվել  
հաղթական պրոլետարական հեղափոխության հետեւ-  
վանքով։ Բայց այդ միավորումը հիմնականում իրա-  
գործված կլինի տակավին մինչև հեղափոխությունը։

Լուգի կ գ։ Փառասիրությունը պատմական  
խոշոր անձնավորության գործունեյության համար  
արդյոք խթան ե հանդիսանում ։ Թե խոչընդուռ։

Ստալին։ Տարբեր պայմաններում փառա-  
սիրության գերը տարբեր է։ Նայած պայմաններին՝  
փառասիրությունը պատմական խոշոր անձնավորու-  
թյան գործունեյության համար կարող ե լինել խթան  
կամ խոչընդուռ։ Ավելի հաճախ փառասիրությունը  
խոչընդուռ ե լինում։

Լուգի կ գ։ Հոկտեմբերյան հեղափոխու-  
թյունը վորեե իմաստով արդյոք հանդիսանո՞ւմ ե  
ֆրանսական Մեծ Հեղափոխության շարունակությու-  
նը և ավարտումը։

Ստալին։ Հոկտեմբերյան հեղափոխությու-  
նը ֆրանսական Մեծ Հեղափոխության վո՞չ շարունա-  
կությունն է, վո՞չ ել ավարտումը։ Ֆրանսական հե-  
ղափոխության նպատակը ֆեոդալիզմի վերացումն եր՝  
կապիտալիզմը հաստատելու համար։ Իսկ Հոկտեմբեր-  
յան հեղափոխության նպատակը կապիտալիզմի վե-  
րացումն ե՝ սոցիալիզմը հաստատելու համար։

«Եօլիան» № 8, 1932 թ.



Թարգմանությունը խմբագրեց Տ. Ա. Ալեքսանյան  
Տեխն. խմբագիր Ս. Խաչատրյան  
Մըբագրիչ Հ. Մանվիլյան  
Կոնսորտ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավիտի լիազոր № Կ-3292, հրատ. № 571


Գատվեր № 104, տիրաժ 10.000

Հանձնված և արտադրության 3/VI 1938 թ.

Ստորագրված և տպագրելու 22/VI 1938 թ.

Գինը 25 կ., կազմը 1 ս.

Պետրաստ-Թաղաքական գրականության հրատարակության  
տպարան, Երևան, Ալավերդյան № 65





ԳԻՒԸ 75 Կ.

631

И. СТАЛИН  
Беседа с немецким  
писателем Эмилем  
Людвигом  
Армгиз—Издательство  
полит. литературы  
Ереван, 1938